

## **Տեղեկատվություն թաքցնելը՝ հնարավոր վտանգ շրջակա միջավայրի համար**

Շրջակա միջավայրի նախարարությունը e-draft հարթակում հանրային քննարկման է ներկայացրել տեղեկատվության ազատության մասին օրենքում փոփոխություն կատարելու նախագիծը:

Կարծում ենք, որ թեև հազվագյուտ կենդանիների և բույսերի բազմացման վայրերի վերաբերյալ տեղեկատվության սահմանափակ մատչելիությունը բխում է ՀՀ վավերացրած Օրհուաի կոնվենցիայի դրույթից, սակայն այն որոշակի պայմաններում պարունակում է նաև չարաշահման ռիսկ:

Մասնավորապես, առկա է վտանգ, որ տեղեկատվություն տնօրինողը կարող է նշված տեղեկատվությունը թաքցնել հասարակությունից՝ նպատակ ունենալով անխոչընդոտ թույլատրել այդ նույն տեղանքներում շրջակա միջավայրի նկատմամբ ազդեցություն ունեցող կամ դրա համար վտանգ ներկայացնող եղանակներով հողերի օգտագործումը կամ օտարումը, այդ թվում՝ օբյեկտների կառուցումը, շրջակա միջավայրի նկատմամբ բացասական ազդեցություններ ենթադրող գործողությունների իրականացումը և այլն: Նման պայմաններում անհրաժեշտ է առնվազն սահմանել հանրային վերահսկողական գործիքակազմ:

Այդ նպատակով անհրաժեշտ է.

1. նախատեսել, որ քննարկվող տեղեկատվության մատչելիության սահմանափակումը չի տարածվում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում առնվազն 2 տարվա գործունեություն իրականացնող կազմակերպությունների վրա. որպես հկ-ների ստացած տեղեկատվության ոչ իրավաչափ հրապարակման երաշխիք հնարավոր է նախատեսել նաև համաչափ պատասխանատվություն,
2. ընդլայնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում հասարակական կազմակերպությունների առկա իրավասությունների շրջանակը:

Թեև հազվագյուտ կենդանիների և բույսերի բազմացման վայրերի վերաբերյալ տեղեկատվության սահմանափակ մատչելիությունը բխում է ՀՀ վավերացրած Օրհուաի կոնվենցիայի դրույթից, սակայն կարծում ենք, որ այն որոշակի պայմաններում պարունակում է նաև չարաշահման ռիսկ: Մասնավորապես, առկա է վտանգ, որ տեղեկատվություն տնօրինողը կարող է նշված տեղեկատվությունը թաքցնել հասարակությունից՝ նպատակ ունենալով անխոչընդոտ թույլատրել այդ նույն տեղանքներում շրջակա միջավայրի նկատմամբ ազդեցություն ունեցող կամ դրա համար վտանգ ներկայացնող եղանակներով հողերի օգտագործումը կամ օտարումը, այդ թվում՝ օբյեկտների կառուցումը, շրջակա միջավայրի նկատմամբ բացասական ազդեցություններ ենթադրող գործողությունների իրականացումը և այլն:

Նման պայմաններում անհրաժեշտ է առնվազն սահմանել հանրային վերահսկողական գործիքակազմ: Այդ նպատակով անհրաժեշտ է.

- 1) նախատեսել, որ քննարկվող տեղեկատվության մատչելիության սահմանափակումը չի տարածվում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում առնվազն 2 տարվա գործունեություն իրականացնող կազմակերպությունների վրա. որպես հկ-ների ստացած տեղեկատվության ոչ

իրավաչափ հրապարակման երաշխիք հնարավոր է նախատեսել նաև համաչափ պատասխանատվություն,

2) ընդլայնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում հասարակական կազմակերպությունների առկա իրավասությունների և շրջանակը:

Երկրորդ առաջարկը պայմանավորված է նրանով, որ հայցված տեղեկատվությունը ստանալն ինքնին ինքնանպատակ չէ և չի ապահովի հանրային վերահսկողության արդյունավետությունն առաջին հերթին այն պատճառով, որ այդ տեղեկատվությունը միևնույն է հասու չի լինի հասարակության լայն շերտին: Ուստի հանրությունն, ի դեմս ոլորտում գործունեություն ծավալող և փորձագիտական ներուժ ունեցող կազմակերպությունների, պետք է ունենա դատավարական իրավասություն՝ վիճարկելու վարչական մարմնի ցանկացած գործողություն և որոշում, որով ենթադրաբար ոչ իրավաչափ միջամտություն է իրականացվում շրջակա միջավայրի նկատմամբ, այդ թվում՝ հազվագյուտ կենդանիների և բույսերի բազմացման վայրերի: Ներկայիս խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի կարգավորումները թույլ չեն տալիս նման հայցով դատարան դիմել այն հկ-ներին, որոնք չեն մասնակցել հիմնադրությամբ փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին, այնինչ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր ազդեցություն ունեցող գործունեության բոլոր հնարավոր տեսակների համար չէ, որ սահմանում է հիմնադրությամբ փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության գնահատում և փորձաքննություն, հետևապես և դրանց վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում: Օրինակ, ըստ օրենքի, անհրաժեշտ չէ համապատասխան փորձաքննություն և գնահատում իրականացնել մինչև 10 կմ երկարությամբ ճանապարհի կառուցման կապակցությամբ, այնինչ այդ միջամտությունը ևս կարող է էական բացասական ազդեցություն ունենալ այս կամ այն էկոհամակարգի, առանձին կենդանիների, բույսերի տեսակների կենսագործունեության վրա և այլն: Սակայն օրենքի տառացի մեկնաբանման դեպքում ստացվում է, որ նման դեպքերում հասարակական կազմակերպությունները, պայմանավորված հիմնադրությամբ փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներ չանցկացվելու, հետևապես և դրանց չմասնակցելու հանգամանքով, զրկվում են այդ գործողությունները դատական կարգով վիճարկելու հնարավորությունից:

Հիմք ընդունելով նշվածը՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է կատարել լրացում նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.6 հոդվածի 2-րդ մասում, ավելացնել 4-րդ կետ՝ այն շարադրելով հետևյալ կերպ. «Սույն մասի 2-րդ կետի պահանջը չի գործում այն դեպքերում, երբ օրենքով հիմնադրությամբ փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում չի նախատեսվում»: